72. ՏԵՐՏԵՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա՝ չիլա՛լ մին տերտեր։ Էս տերտերըս էլ քյինացալ ա պատարաքյ անիլ։ Մին մարթ եկալ ա էս տերտերիս տունը, թա. «Տերտերը հոր ա՞»։ Նահանք էլ ասալ ըն. «Քյինացալ ա պատարաքյ անիլ»։ Էս մարթն ասալ ա. «Պատարաքյը հինչ ա՞»։ Սահանք էլ ասալ ըն, թա. «Պատարաքյն ա իլհի»։ Ետնան էս տերտերը վըեր եկալ ա պատարաքյտեղից, էս մարթն ասալ ա. «Ադե՛ր, հոր ը՞ս քյինացալ»։ Տերտերն էլ ասալ ա թա. «Քյինացալ ըմ պատարաքյ անիլ»։ Էս մարթն ասալ ա. «Պատարաքյը հինչ ա՞, կիկյա՛ս մեր շենումն էլ պատարաքյ անե՞ս»։ Էս տերտերն ասալ ա. «Լա՛վ, կիկյամ»։

Ետնան էս տերտերը քյինացալ ա էն շենիցը շատ մդրաճանճ հըվաքալ, էս մարթիքյը հրցրալ ըն, թա. «Ա՛դեր, էտ խե յը՞ս ըտհենց անում»։ Տերտերն էլ ասալ ա. «Ըստրանավ ըմ ընելու»։ Ետնան էս մարթիքյը քյինացալ ըն ժամ, էս տերտերն ասալ ա. «Լոխըքանտ էլ տկլորացեքյ»։ Սահանք էլ տկլորացալ ըն, մինակ փոխաննեն ա մնացալ կյեցըներին։ Մարթիքյն ասալ ըն. «Ա՛դեր, համոթ ա, փոխաննես հանենքյ ոչ»։ Տերտերն էլ ասալ ա. «Լա՛վ ա, հանիլ միքյ, ամմա մին պատառ վախտ տուրուր չի կյաք»։

Ետնան էս տերտերը էս մդրաճանճերը պա՛ց ա թողալ, սահանց վըեր կծոտալ ըն, ղըոբռոցը նի յա ինկյալ, մին մարթ էլ ասալ ա. «Պելի՛, պելի՛, մեր հարսը տեսի՞ր»։ Էս մարթն ասալ ա. «Տեսի, պատարաքյը ո...ան կացած քյինաց»։ Ետնան էս մարթիքյը մին փետ ըն քաշալ, էս տերտերին թակալ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։